ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 հոկտեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

139
(2989)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԵՐԵՄՅԱՆՆԵՐԸ» ԱՐՏՈՆՅԱԼ ԿԵՐՊՈՎ ՇԱՀՈՒՄ ԵՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԸ

«Հայր եւ որդի Երեմյաններ» եւ Yeremyan Products ընկերությունները, որոնք, ինչպես արդեն գրել էինք, համարվում են իշխանությունների կողմից արտոնյալ, որոնք մասնակցում են պետական մասշտաբի բազմապիսի գնման մրցույթներին, հաղթում դրանք եւ իրականացնում են մեկ անձից գնման ընթացակարգով բոլոր ներկայացուցչական աշխատանքները, խոշոր փոխանցումներ են կատարել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կազմակերպած դրամահավաքին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջին մեկ ամսվա ընթացքում «Հայր եւ որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն պետական կառույցներից գրեթե 2 մլն դրամ արժողությամբ գնում է իրականացրել: Այդ կառույցներն են Երեւանի քաղաքապետարանը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեն եւ ՀՀ վարչապետի աշխատակազմը:

Կատարված 9 գնումները եղել են մեկ անձից գնման ընթացակարգով՝ առանց մրցակցության: Հիմնականում մատուցվել են կրկին ներկայացուցչական ծառայություններ, հյուրասիրության ծառայություններ եւ հանրային սննդի կազմակերպում:

Երեմյանների դեպքում հաճախ ենք նկատում, որ պետական համակարգի հետ պայմանագրեր կնքելը գրեթե միշտ կատարվում է մեկ անձից գնման եղանակով՝ առանց մրցույթի եւ մրցակցության:

Եվ հետաքրքիր է, որ սա չի առաջացնում կասկածներ, օրինակ, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում: Երեմյանների առաջ բաց են կարծես բոլոր դռները, եւ նրանց բիզնեսն անխոչընդոտ առաջ է գնում:

Երեմյաններին պատկանող 16 ռեստորան ունեցող «Երեմյան փրոջեքթս» ընկերությունը եւս արտոնյալների ցանկում է: «Հայր եւ որդի Երեմյաններ»-ը եւ ԱՆԻՖ-ի՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ»-ի «Ձեռնարկատեր+պետություն» ՓԲԸ-ն համատեղ ծրագիր են իրականացրել: Այս ծրագրի շրջանակում 225 հա հողատարածք եւ սարքավորումներ են ձեռք բերվել, որոնք պետք է նպաստեին անասնակերի աճեցմանը եւ մշակմանը: Ստացված հենց այդ բերքով են Երեմյանների՝ Ջերմուկի ֆերմայի կովերը սնվել:

Հաջորդիվ կներկայացնենք, թե ինչ ընթացքի մեջ է այդ ծրագիրը ԱՆԻՖ-ի լուծարումից հետո:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ 5-րդ կորպուսի հրամանատարի պաշտոնից վերջերս ազատված Սասուն Բադասյանի ազատման պատճառը եղել է այն, որ նա ատեստավորման քննությունների ժամանակ իր մերձավոր զինծառայողի գնահատականը փորձել է բարելավել: Տեղեկությունը հասել է նաեւ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին, որն էլ իր հերթին որոշել է պատժել կորպուսի հրամանատարին՝ հովանավորչության եւ ատեստավորման գործընթացի անաչառությանը հարված հասցնելու համար: Մեր աղբյուրը նաեւ նշեց, որ այլ շրջանակներում Սասուն Բադասյանի ազատման պատճառ է նշվում ակադեմիայում ուսումնառության գնալու հանգամանքը, սակայն իրական պատճառը եղել է հենց մեզ հասած տեղեկությունը: Մեզ լուրեր են հասել նաեւ, որ կորպուսի հրամանատարի նկատմամբ այդ կապակցությամբ հարուցվել է քրեական գործ: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց գտնել հրամանատարին, սակայն փորձերն անցան ապարդյուն. արձագանքի դեպքում «Ժողովուրդ» օրաթերթը պատրաստ է հրապարակել նաեւ վերջինիս մեկնաբանությունը:

ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնը իսկական կռվախնձոր է դարձել ՔՊ-ի ներսում: Պատգամավորներից ամեն մեկն իր թեկնածուին է առաջ տանում, բայց արդյունքում չեն կարողանում որեւէ թեկնածուի շուրջ համաձայնության գալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արդարադատության նախարարի թեկնածուն թեժ կռիվ է գցել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի միջեւ: «Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ Ալեն Սիմոնյանը նախ Արփի Դավոյանի եւ Անդրանիկ Քոչարյանի հետ ձեռնամուխ է եղել, որպեսզի իր հարազատ նախարար Գրիգոր Մինասյանը հեռանա պաշտոնից, ապա վստահեցրել է զույգին, որ ամեն ինչ անելու է, որ Արփի Դավոյանը նախարար դառնա: Վերջին պահին, սակայն, Ալեն Սիմոնյանը անակնկալ ձեւով Հրաչյա Հակոբյանի հետ առաջ է տարել իրեն ընկեր դարձած Սիսակ Գաբրիելյանի թեկնածությունը, որը, սակայն, դարձյալ չի ընդունվել: Արդյունքում, վարչության նիստում չի եղել մեկը, որը կպաշտպանի ու առաջ կտանի Արփի Դավոյանի թեկնածությունը, ավելին՝ մեծամասնության շրջանում արմատացած է եղել տեսակետը, որ ամոթ կլինի՝ Արփի Դավոյանը նախարար դառնա: Վարչության նիստին, սակայն, Ալեն Սիմոնյանը ներկա չի եղել. նա երկրից բացակայում է: Հիմա Անդրանիկ Քոչարյանը ամեն անկյունում բողոքում է Ալեն Սիմոնյանի վարքագծից, որ իր խոստման տերը չի եղել ու վերջին պահին հուսախաբ է արել: Այսպիսով՝ ՔՊ-ում այս օրերին լարված մթնոլորտ է բարձր պաշտոնի համար. ՔՊ-ականները արդարադատության նախարարի ընտրությունը տապալելու համար միմյանց են մեղադրում:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների կանոնակարգն ԱԺ-ում է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ փոխվարչապետ Միհր Գրիգորյանն այն կներկայացնի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստում, որը կկայանա հոկտեմբերի 21-ին: «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը ստորագրվել է 2024 թ. օգոստոսի 30-ին, հայաստանյան կողմից՝ ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանի կողմից: Ըստ կանոնակարգի՝ հանձնաժողովները պայմանավորվածություն են ձեռք բերել, որ սահմանազատման գործընթացում կառաջնորդվեն 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրով, եւ դրանով սահմանված հիմնարար սկզբունքի համապատասխան սահմանազատման գործընթացի սկզբնական փուլում նախնական համաձայնեցրել են սահմանագծի համապատասխան հատվածների անցումը՝ Խորհրդային միության փլուզման պահի դրությամբ գոյություն ունեցող իրավաբանորեն հիմնավորված միջհանրապետական սահմանին համապատասխանեցնելու նպատակով: Կանոնակարգը, հոկտեմբերի 21-ին հանձնաժողովում դրական եզրակացություն ստանալուց հետո, պետք է նաեւ քննարկվի ԱԺ լիագումար նիստի ընթացքում: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ հայտնել էր, որ Նիկոլ Փաշինյանը խուսափում է պատասխանատվությունից եւ չի ստորագրում Հայաստանի համար վճռորոշ իրավական որեւէ փաստաթուղթ:



ԶՐՈՒՅՑ

«ՀԵՐՔՎԵՑ ՊԱՐԶՈՒՆԱԿ «ԲԼԵՖԸ»». ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Արամ Մանուկյանի հետ զրուցել է Սահմանադրական դատարանի կողմից հրապարակված որոշման մասին, որի համաձայն՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման պետական հանձնաժողովի կարգը սահմանադրական է:



-Պարոն Մանուկյան, հարցազրույցը կբաժանենք երկու մասի. նախ կխոսենք վերջերս՝ սեպտեմբերի 26-ին, Սահմանադրական դատարանի կողմից հրապարակված որոշումից, որի համաձայն՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման պետական հանձնաժողովի կարգը սահմանադրական է: Այսինքն, Սահմանադրական դատարանն այս հարցում որեւէ խնդիր չի տեսել, եւ առաջիկայում իշխանությունը պատրաստվում է կանոնակարգն ուղարկել Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողով: Ձեր դիրքորոշումն է հետաքրքիր. ի՞նչ է սա նշանակում, ի՞նչ սպասել այդ ամենից առաջիկայում:

-Փորձել ենք տարբեր քաղաքական գործիչների եւ իրավաբանների, ինչպես նաեւ սահմանադրական դատարանի նախկին անդամների ու իրավագետների հետ խոսել: Շատ, թե քիչ արդեն երկար ժամանակ է օրենքների հետ աշխատանքի դաշտում եմ, բայց գլուխ չենք հանել, թե այդ որոշմամբ ինչ են ցանկացել ասել. դրանով անհասկանալի իրավիճակ են ստեղծել: Այն մոտ 30 էջանոց, բարդ տերմիններով լի խուճուճ տեքստ է՝ համադասական, ստորադասական նախադասություններով: Մինչեւ հասնում ես վերջին՝ մոռանում ես, թե սկզբում ինչ էր գրված: Բացարձակ իրավաբանական տեքստ չէ, ոչ էլ իրավական բառապաշարով է գրված: Հիմնական ասելիքը թաքցնելու համար, երեւի թե, պատմական էքսկուրս են արել, եւ դա արել են նաեւ հատուկ կարծիքի հեղինակները, որի կարիքն ամենեւին չկար. ավելորդ շփոթ է առաջացնում: Անդրադառնում են Սահմանադրության ծագմանը, ինչը չեմ հասկանում՝ ինչ կապ ունի որոշման հետ: Ամեն դեպքում, այս փաստաթուղթը իրավաբանական փաստաթուղթը չէ, պատմական խուճուճ ակնարկ է, որի նպատակը ամենեւին դա չէր: Եթե նպատակը կանոնակարգի հաստատումն էր, կանոնակարգին համապատասխանության հարցն էր Սահմանադրությանը, ապա իրենք կարող էին մեկ-երկու էջով, ինչպես սովորաբար լինում են որոշումների դեպքում, ասեին, որ դա համապատասխանում է Սահմանադրությանը:

Բայց այստեղ, բացի հակահրավաբանական ու խուճուճ մոտեցումից, ուղերձ կա Ադրբեջանին: Այդ ամբողջ տեքստը ուղերձ է ոչ թե Ազգային ժողովին կամ հասարակությանը, այլ Արդբեջանին՝ արդարացնելու, որ այդ հռչակագիրը կարող է Սահմանադրության մաս չլինել, հռչակագիրը չէ, որի հիման վրա պիտի հիմնված լինեն հայ-ադրբեջանական հարաբերությունները: Դա արդարացում էր ի դեմս Ալիեւի պահանջների, եւ մեկ օր չանցած Ադրբեջանն արձագանքեց: Երեւի իրենց առջեւ խնդիր էին դրել, որ Ադրբեջանը հայտնի, որ առանց այդ փաստաթղթի էլ կկարողանան խաղաղության պայմանագիր կնքել: Իրենք պարզապես փորձել են հիմնավորումներ եւ արդարացումներ ներկայացնել՝ արդարացնելու «Խաղաղության պայմանագիրը»:

Սակայն Ադրբեջանը մեկ օր չանցած արձագանքեց՝նշելով, որ այդ տարբերակը չի ընդունում եւ Ալիեւի ամբողջական պահանջներն են խաղաղության պայմանագիրը ստորագրելու հիմքում: Հենց այդ հայտարարությամբ էլ հերքվեց իշխանության այդ պարզունակ «բլեֆը»:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՉԵՆ ՎՍՏԱՀՈՒՄ

2018 թվականի հոկտեմբերի 20-ին Լիբանանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Կոչ եմ անում վստահությամբ վերաբերվել Հայաստան համահայկական հիմնադրամի աշխատանքներին եւ օժանդակել հիմնադրամին գործունեության թափանցիկության, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում... Շատ կարեւոր է վստահության զգացումը, եւ հույս ունեմ, որ Հայաստան-Սփյուռք հարաբերությունները կհիմնվեն առաջին հերթին վստահության վրա»:

Իրականում, սակայն, Հայաստան համահայկական հիմնադրամի նկատմամբ վստահությունը կարելի է չափել հանգանակություններով, տարեկան մարաթոնով: 2023 թվականի հեռուստամարաթոնի ժամանակ հանգանակվել է վերջին 6 տարիների վիճակագրությամբ ամենաքիչ գումարը՝ 8.4 մլն դոլար: Այն էլ, ոչ թե այդքան գումար է հանգանակվել, այլ այդքան գումարի խոստում է տրվել, որի մի մասը կարող է եւ չի կատարվել:

Սփյուռքի վստահության անկումը հիմնադրամի նկատմամբ կարելի է բացատրել մի շարք գործոններով՝ Արցախի հանձնում, ՀՀ սահմանների օկուպացիա: Բայց վստահության դեֆիցիտի կարեւոր հանգամանքն այն է, որ 2020 թվականի պատերազմի ընթացքում հայության կողմից հանգանակված գումարների մեծ մասը՝ 107 մլն դոլար, կառավարության որոշմամբ պետական բյուջե մտցվեց, եւ մինչ այժմ հայտնի չէ, թե ինչ են արվել այդ գումարները: Թերեւս պարգեւավճարներ տվեցին հիմնադրամի գումարներով: Այսինքն՝ Փաշինյանը խաբել է:

«ԿԱՐՄԻՐ ՔԱՐՏ»՝ ԱՐՓԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ

ՔՊ կուսակցությունը 2 օր առաջ վարչության նիստում այդպես էլ արդարադատության նոր նախարար չընտրեց:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Գրիգոր Մինասյանի հեռանալուց հետո ՔՊ-ն նրան փոխարինողների չորս թեկնածուների է քննարկել՝ Արփի Դավոյան, Արուսյակ Ջուլհակյան, Վլադիմիր Վարդանյան եւ Հերիքնազ Տիգրանյան, որոնք եւս ներկա են եղել վարչության նիստին:

«Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել ՔՊ վարչության նիստից:

Նախ, տեղեկացանք, որ այն բավականին երկար է տեւել ու թեժ մթնոլորտում է անցել, ՔՊ-ականները երկար ժամանակ համաձայնության չեն եկել թեկնածուների վերաբերյալ:

Վարչության նիստին թեկնածուների մեծ մասը՝ Արուսյակ Ջուլհակյանը, Վլադիմիր Վարդանյանը եւ Հերիքնազ Տիգրանյանն ի սկզբանե հանել են իրենց թեկնածությունները եւ, ինչպես նախապես իրենց թիմակիցներին զգուշացրել էին, չեն ցանկացել գործադիր տեղափոխվել:

Արդյունքում՝ վարչության նիստին մնացել է միայն Արփի Դավոյանի թեկնածությունը, որի երազանքն է եղել արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցնելը եւ անգամ արդեն իր թիմակիցներին ծրագիր է ներկայացրել՝ ինչպես է ղեկավարելու նախարարությունը:

Բայց, արի ու տես, ՔՊ-ում Արփի Դավոյանին «կարմիր քարտ» են ցույց տվել, եւ վարչության անդամներից միայն երկուսն են քվեարկել նրա օգտին՝Սուրեն Պապիկյանը եւ Վահագն Ալեքսանյանը:

Հավանաբար, ՔՊ-ականները հասկացել են, որ չարժե միայն կուսակցության անդամ լինելու համար նախարարի կարեւոր պաշտոնը վստահել Դավոյանին, որն առհասարակ կապ չունի իրավաբանության եւ արդարադատության հետ:

Ինչպես արդեն հայտնել ենք, Արփի Դավոյանի թեկնածությունն ի սկզբանե նաեւ Նիկոլ Փաշինյանի սրտով չի եղել, եւ փաստացի, չնայած Դավոյանի եւ Անդրանիկ Քոչարյանի ջանքերին, ով ակտիվորեն Դավոյանի լոբբինգով էր զբաղվում, ՔՊ-ականները մերժել են նրանց:

Մինչեւ հաջորդ շաբաթ ՔՊ-ն արդարադատության նախարարի նոր թեկնածուներ պետք է առաջադրի եւ արդեն վարչության հաջորդ նիստին քվեարկի:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՁԱԽԱՐՈՎԱՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան ճեպազրույցի ժամանակ ասել է, որ Հայաստանը մասնակցել է աշխատանքներին, բայց հետո չի ստորագրել «Եվրասիայում անվտանգության ապահովման սկզբունքների մասին» հայտարարության նախագիծը, որն ընդունվել է ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստում:

«Երեւանն իր առաջարկներն է ներկայացրել տեքստի վերաբերյալ, որոնցից շատերը հաշվի են առնվել: Դրա հետ մեկտեղ ԱՊՀ երկրների նախարարների խորհրդում հայ նախարարը չի ստորագրել հայտարարության տեքստը», - ասել է Զախարովան:

Նա առաջարկել է հայ պաշտոնյաներից պարզել հայկական կողմի այս որոշումը կայացնելու պատճառները:

ՄՏԱՀՈԳԻՉ

ԿԳՄՍ նախարարությունը հայտարարությամբ է հանդես եկել հանրակրթական դպրոցներից մեկում հատուկ գործողություն իրականացնելու առնչությամբ:

«Հանրակրթական դպրոցներից մեկում իրավապահ մարմինների իրականացրած հատուկ գործողության առնչությամբ ԿԳՄՍ նախարարությունը գրությամբ դիմել է համապատասխան մարմիններին՝ կատարված գործողությունների՝ երեխայի լավագույն շահի տեսանկյունից իրավաչափության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

Կարեւոր ենք համարում, որ երեխաների ներկայությամբ իրավապահ մարմինների կողմից իրականացվող հատուկ գործողությունները հաշվի առնեն երեխաների լավագույն շահը եւ հոգեբանական առանձնահատկությունները:

Այդ իմաստով ԿԳՄՍ նախարարությունը մտահոգիչ է համարում Երեւանի դպրոցներից մեկում երեխաների ներկայությամբ տեղի ունեցած հատուկ գործողության վերաբերյալ ստացվող ահազանգերը եւ հորդորում համապատասխան կառույցներին ուսումնական հաստատություններում գործողություններ իրականացնելիս հաշվի առնել վերը նշված հանգամանքները:

Միաժամանակ հայտնում ենք, որ ԿԳՄՍ նախարարությունը պատրաստակամ է համագործակցել ՀՀ բոլոր շահագրգիռ պետական կառույցների հետ՝ ուսումնական հաստատություններում անվտանգության մակարդակը բարձրացնելու, այդ թվում՝ նաեւ աջակցելու իրավապահների օրինական գործողությունների իրականացմանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՌԱՄՇՏԱՅՆԻ ՁԵՎԱՉԱՓՈՎ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Երկրների ղեկավարների մակարդակով Ռամշտայնի ձեւաչափով նիստը, որը պետք է տեղի ունենար հոկտեմբերի 12-ին Գերմանիայում, անորոշ ժամանակով հետաձգվել է, հանդիպման նոր ժամկետը կորոշվի ավելի ուշ: Այդ մասին հաղորդել է «Ազատություն» ռադիոկայանի ուկրաինական ծառայությունը՝վկայակոչելով ՆԱՏՕ-ի կենտրոնակայանի աղբյուրների:

Ավելի վաղ Սպիտակ տանը հայտնել էին, որ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը «Միլթոն» գերհզոր փոթորկի մոտենալու պատճառով հետաձգել է իր ուղեւորությունը Եվրոպա, որի ընթացքում նա պետք է մասնակցեր նաեւ Ռամշտայնի ձեւաչափով նիստին:

Բայդենի այցը Գերմանիա պետք է լիներ մոտ 40 տարվա ընթացքում ԱՄՆ ղեկավարի առաջին այցն այդ երկիր պետական մակարդակով: Ուկրաինայում հույս ունեին այս հանդիպմանը կրկին բարձրացնել Ռուսաստանի տարածքի թիրախների դեմ արեւմտյան երկրների հեռահար զենքի կիրառման հարցը:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑ

Իսրայելի հնարավոր հրթիռային հարվածի խորապատկերում Իրանի խորհրդարանը լրջորեն քննարկում է Միջուկային զենքի չտարածման պայմանագրից դուրս գալու հնարավորությունը: «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությանն այդ մասին հայտնել է Իրանի խորհրդարանի՝ Ազգային անվտանգության եւ արտաքին քաղաքականության հանձնաժողովի անդամ Ալաէդին Բորուջերդին:

Նա նշել է, որ այդ պայմանագրից դուրս գալու տարբերակի քննարկումն իրականում լուրջ բանավեճ է առաջացրել խորհրդարանում: Ըստ Բորուջերդիի, հարցի քննարկումն ամենեւին էլ չի նշանակում, որ Իրանը միջուկային զենք կստեղծի:

Ավելի վաղ իրանցի 39 խորհրդարանականներ դիմել էին Իսլամական Հանրապետության ազգային անվտանգության բարձրագույն խորհրդին՝խնդրելով վերանայել երկրի պաշտպանական դոկտրինը, մասնավորապես՝ Իսրայելի հնարավոր հարձակման սպառնալիքի պայմաններում արտոնել միջուկային զենքի ստեղծումը:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԿՍԱՌԵՑՎԻ՞

Եվրախորհրդարանի պատգամավորները ձայների 495 կողմ, 73 դեմ, 86 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունել են բանաձեւ, որով պահանջում են սառեցնել պաշտոնական Թբիլիսիի եվրոպական ֆինանսավորումը՝ հայտարարելով, որ Վրաստանի ներկայիս նահանջը ժողովրդավարությունից կասեցնում է այդ երկրի ինտեգրումը Եվրամիությանը:

Եվրախորհրդարանը կոչ է արել Վրաստանին Եվրամիության հատկացրած ողջ ֆինանսավորումը դադարեցնել մինչեւ այն պահը, երբ երկիրը կչեղարկի ոչ ժողովրդավարական օրենսդրությունը, մասնավորապես՝ «Օտարերկրյա գործակալների մասին» եւ «Ընտանեկան արժեքների եւ անչափահասների պաշտպանության մասին» օրենքները, ինչպես նաեւ օրենսգրքում կատարված փոփոխությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՒԼ Է ԳՆՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԵՏԵՎԱՆՔԸ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ» ՉԻ ԼԻՆԻ

Խաղաղության պայմանագիրը Հայաստանի՝ չակերտների մեջ առնված խաղաղությունն է, որը հանգիստը «կորցրել է» վերջին 4 տարիներին:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անձամբ ձգտում է Ադրբեջանի հետ ստորագրել «Խաղաղության պայմանագիր», սակայն Ադրբեջանի նախագահն իրեն հատուկ պահանջատիրական պնդմամբ՝ հայցում է պայմանագրի բոլոր կետերի վերաբերյալ համաձայնություն: Եթե խաղաղության պայմանագրի ամբողջական տեքստը չի հաջողվում ստորագրել, առաջարկում են ստորագրել արդեն իսկ համաձայնեցված կետերը ներառող փաստաթուղթ: Եթե դա էլ չի հաջողվում, համաձայն են ստորագրել սկզբունքների շուրջ պայմանագիր: Եթե անգամ դա էլ է մերժվում Ադրբեջանի կողմից, ապա Հայաստանը պատրաստ է մի որեւէ այլ թուղթ ստորագրելու: Իրատես եւ տրամաբանող յուրաքանչյուր ոք հասկանում է, որ ո՛չ «Խաղաղության պայմանագիրը», ո՛չ որեւէ այլ փաստաթուղթ չեն բացառելու նախագահ Իլհամ Ալիեւի կողմից նոր պատերազմի հավանականությունը: Երկկողմ ստորագրված փաստաթղթերը զսպող գործոն են միայն:

Մինչ Ադրբեջանի նախագահը շարունակում է մեղադրել Երեւանին խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններում ժամանակ ձգելու մեջ եւ նոր նախապայմաններ է դնում Հայաստանի առջեւ, Նիկոլ Փաշինյանն ամեն պատեհ-անպատեհ իրավիճակներում տարբեր բարձր ամբիոններից առիթը բաց չի թողնում հայտարարելու՝ Հայաստանը պատրաստ է «Խաղաղության պայմանագիր» ստորագրել Ադրբեջանի հետ:

Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 12-ին Ազգային ժողովում ասել է. «Կա 13 հոդված, որոնք ամբողջությամբ պաշտոնապես համաձայնեցված են «Խաղաղության պայմանագրի» նախագծում, նախաբանն ամբողջությամբ համաձայնեցված է, թղթի վերնագիրն ամբողջությամբ համաձայնեցված է, եւս 3 հոդված մասնակի է համաձայնեցված, այսինքն՝ հոդվածում կան մասեր, կա նախադասություն, որ համաձայնեցված է. կա եւս մեկ հոդված, որ ընդհանրապես համաձայնեցված չէ: Օրինակ՝ ամենասկզբում «Խաղաղության պայմանագրի» երկրորդ, երրորդ խմբագրությունները ունեցել են 18 հոդված, այսինքն՝ ինչ-որ հոդվածներ դուրս են եկել, օրինակ՝Ադրբեջանն ինքը հայտարարեց կոմունիկացիաների հոդվածի դուրս գալու մասին, այսինքն՝մնացել են 17-ը»:

Ադրբեջանը պահանջում է բոլոր կետերի շուրջ համաձայնություն:

44-օրյա պատերազմի 4-րդ տարելիցին ադրբեջանական լրատվամիջոցները ներկայացրել են՝ «Խաղաղության պայմանագրի» որ կետերի շուրջ են բանակցություններն անավարտ՝այն համարելով կապիտուլյացիոն համաձայնագիր:

«Սկզբում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հաշտության պայմանագրի տարբերակում կար 33 կետ, հետո՝ 30, հետո բանակցություններից հետո՝ 17, հետո Ադրբեջանը հրաժարվեց Զանգեզուրի միջանցքի հետ կապված կետից եւ ընդհանուր միավորը դարձավ 16: Դրանցից 13-ը համաձայնեցված են, իսկ 3-ը՝ոչ. հայկական կողմի մերժած այս 3 կետերն են, որ հիմք են հանդիսանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության եւ համապարփակ երկկողմ հարաբերությունների համար: Փաստն այն է, որ կետերից առաջինը վերաբերում է անվտանգության խնդիրներին, երկրորդը՝ Հայաստանի սահմանադրությանը, այսինքն՝ հայկական պետականության իրավական ասպեկտներին, որտեղ իրականում առկա է ապագայում խաղաղության պայմանագիրը չեղյալ հայտարարելու սպառնալիք, եւ երրորդ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբում լինելը: Այս կետերը նախագծից ուղղակի բացառելը շատ անլուրջ քայլ էր, քանի որ համաձայնեցված բոլոր կետերից միայն այս երեքն են Բաքվի համար սկզբունքային նշանակության, այդ մասին մշտապես ասել է Ադրբեջանի նախագահը»,- գրում են ադրբեջանական ՁԼՄ-ները:

Հայաստանի վարչապետը վերջին ասուլիսին տեղեկացրեց, որ Երեւանն ու Բաքուն ամբողջովին համաձայնեցրել են խաղաղության համաձայնագրի 17 հոդվածից 13-ը: Դեռ պարզ չէ, թե խաղաղության պայմանագրի չհրապարակված կետերն ինչ են սահմանում, սակայն պարզ է, որ «Խաղաղության պայմանագրի» հետեւում ամենեւին էլ խաղաղությունը չէ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ՓԱԿ ԿԼԻՆԵՆ

Էրեբունի-Երեւան 2806-ամյակին նվիրված տոնակատարության միջոցառումներով պայմանավորված՝ սույն թվականի հոկտեմբերի 11-ին՝ ժամը 12:00-ից մինչեւ հոկտեմբերի 12-ի ժամը 21:00-ն, փակ է լինելու «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի դիմացի հրապարակը: Այդ մասին տեղեկացնում են Երեւանի քաղաքապետարանից:

Ըստ այդմ՝ Երեւանի ներհամայնքային ավտոբուսային հ. 18, 38, 56 երթուղիների աշխատանքը ժամանակավորապես կկազմակերպվի Ազատամարտիկների, Նորաշենի փողոցներով մինչեւ Գ. Մահարու փողոց, այնուհետեւ՝ գործող ուղեգծերով:

Նույն ժամանակահատվածում կդադարեցվի տրոլեյբուսային հ.2 երթուղու աշխատանքը, իսկ հ.2 «Ա» երթուղու աշխատանքը կկազմակերպվի բնականոն ռեժիմով:

Ժամանակավոր անհարմարությունների համար քաղաքապետարանը հայցում է քաղաքացիների ներողամտությունը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Փարիզում Ֆրանսիայի օրենսդիրների հետ քննարկվել են հայերի իրավունքների ադրբեջանական խախտումներն ու պաշտպանության մեխանիզմները:

Արման Թաթոյանը, Արտակ Բեգլարյանն ու Գառնիկ Քերքոնեանը հոկտեմբերի 8-ին Փարիզում հանդիպումներ են ունեցել Ֆրանսիայի Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների եւ Սենատի անդամների հետ՝ Ֆրանսիայի Հայ դատի հանձնախմբի աջակցությամբ եւ ներկայացուցիչ Անահիտ Հակոբյանի ուղեկցությամբ:

Հանդիպումներ են տեղի ունեցել Ազգային ժողովի պատգամավոր Իզաբել Սանտյագոի, Սենատի հայ-ֆրանսիական բարեկամական խմբի նախագահ Ժիլբեր-Լյուկ Դըվինազի, սենատոր Վալերի Բուայեի եւ այլ օրենսդիրների հետ:

Հանդիպումներին ներկայացվել են ադրբեջանական հանցանքների ապացույցները Արցախում եւ Հայաստանում, մասնավորապես, քննարկելով՝

1. Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ գերիների եւ պատանդների ազատ արձակման եւ Հայրենիք վերադարձի պարտադիրությունը:
2. Արցախի ժողովրդի նկատմամբ ադրբեջանական ցեղասպանական քաղաքականությունը, այդ թվում՝ շրջափակումը, բռնի տեղահանումը եւ հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացման փաստերը:
3. Արցախի բնիկ ժողովրդի վերադարձի իրավունքի պատշաճ իրացման մեխանիզմների հարցերը:
4. 2020 թվականից ի վեր Հայաստանի Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի տարածքների ադրբեջանական օկուպացիայի փաստերը:
5. Հայ ժողովրդի դեմ ադրբեջանական ռասիզմի, քսենոֆոբիայի եւ թշնամանքի շարունակվող քաղաքականությունը՝ բարձրագույն իշխանության հովանավորչությամբ:
6. Նշված եւ մնացած բոլոր հանցանքների համար ադրբեջանական իշխանությունների նկատմամբ պատասխանատվության արդյունավետ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը, ինչը միտված կլինի նաեւ կանխելու համար ադրբեջանական հետագա հանցանքները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉ ԿՈՐՈՇԻ ԴԱՏԱՎՈՐԸ

ԳՈՐԾՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ

2024 թվականի ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ խոշոր չափերով խարդախություն կատարելուն օժանդակելու համար կալանավորվել է Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականը:

Մասնավորապես՝ Կոտայքի մարզի 32-ամյա բնակիչը 2022թ. ստեղծել է հանցավոր կազմակերպություն: Խմբի գործողությունները հաջողությամբ քողարկելու եւ դրա բացահայտումն անհնարին դարձնելու նպատակով 32-ամյա տղամարդը նրանց հետ կապն ապահովել է համացանցային տարբեր հավելվածների միջոցով, հանցավոր կազմակերպության մասնակիցներին տվել է երաշխիքներ եւ խորհուրդներ՝ իրենց կատարած հանցանքների համար քրեական պատասխանատվությունից խուսափելու մեխանիզմների վերաբերյալ:

Ըստ նախաքննական մարմնի՝ 2022-2023 թթ. ընթացքում հանցավոր կազմակերպության անդամները պատրաստել եւ օգտագործել են կեղծ անձնագրեր, ամուսնության կեղծ վկայականներ, իբրեւ թե ՌԴ-ում տարբեր նոտարների կողմից վավերացված կեղծ լիազորագրեր եւ տեղեկանքներ: Հանցավոր կազմակերպության անդամները դրանք օգտագործել են պետական տարբեր մարմիններում, դատական ատյաններում եւ խարդախության եղանակով հափշտակել են չորս անշարժ գույք՝ բնակարաններ, որոնցից 3-ը՝ Էջմիածին քաղաքում, 1-ը՝ Երեւանում՝ հիմնականում թիրախավորելով կենդանության օրոք միայնակ բնակված տարեց եւ ժառանգ չունեցող անձանց:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված անշարժ գույքերը խմբի անդամները վաճառել են:

Այնուհետեւ, հանցավոր կազմակերպության անդամները, առանձին դեպքերում տեղեկանալով թիրախավորված բնակարանների սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ կտակի առկայության մասին, այդ անշարժ գույքը խաբեության եղանակով հափշտակելու նպատակով, կեղծ լիազորագրերի հիման վրա հանդես են եկել որպես տուժողների ներկայացուցիչներ եւ իրավասու մարմիններ ներկայացնելով այդ կեղծ փաստաթղթերը՝ նրանց անունից կատարել են սեփականության գրանցման եւ գույքի օտարման գործարքներ:

Մասնավորապես, մեկ դեպքը դատավորի օգնականի (որը նախաքննական մարմինը չէր նշել)՝ գեներալ Մանվել Գրիգորյանի դստեր՝ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականի մասին է: Նրա օժանդակությամբ հանցավոր խմբի անդամները անշարժ գույքի իրական ժառանգներ հանդիսացող անձանց կողմից, իբրեւ ժառանգությունից հրաժարվելու վերաբերյալ նոտարական վավերացմամբ, կեղծ դիմումի հիման վրա, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրել են փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու փաստի հաստատման պահանջի մասին դիմում՝ որպես ապացույց ներկայացնելով նաեւ համայնքապետարանի կոմունալ վարչության պետի անվամբ կազմված եւ հաստատված, կոմունալ վճարումներն իբրեւ կատարված լինելու վերաբերյալ կեղծ տեղեկանքներ:

Քննությամբ ձեռք բերված տվյալներով՝ հափշտակությունների հետեւանքով քաղաքացիներին պատճառվել է ընդհանուր 52.162.500 ՀՀ դրամի վնաս:

Եվ ահա, այս գործով անջատված մաս է եղել քննչական կոմիտեում ու որոշվել է անջատված մասով քննությունը ուղարկել ՀՀ քննչական կոմիտե, քանի որ գործով շոշափվում է դատավոր Նաիրա Գրիգորյանի անունը: Հիշեցնենք որ նա գեներալ Մանվել Գրիգորյանի դուստրն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանը դատի է տվել կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին եւ պահանջում է, որ 12.09.2024թ. «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճելու մասին» որոշումը վերացվի:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Իշխան Սաղաթելյանի մասով նվիրատվությունների վերաբերյալ քննություն է սկսել:

Արդյունքում, մինչ նվիրատվության իրավախախտման քննության օրը հանձնաժողովին է ներկայացվել կուսակցության կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ ապացույց, ըստ որի՝ 10 միլիոն դրամի չափից ավելի նվիրատվությունը վերադարձվել է նվիրատուներին:

Ու այս ամենի արդյունքում հանձնաժողովը վարույթը կարճել է: Արդյունքում, Իշխան Սաղաթելյանը կարճման որոշումն է բողոքարկում դատարանում:

ԻՆՉՆ Է ԵՂԵԼ 15–ԱՄՅԱ ՏՂԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Դպրոցներում երեխաների առեղծվածային մահվան դեպքերը շարունակում են խիստ մտահոգությունների տեղիք տալ: Ինչ հանգամանքներում են երեխաները մահանում, եթե, ըստ ծնողների, չունեն որեւէ առողջական խնդիր:

Հոկտեմբերի 7-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Արագածոտնի մարզում: Ժամը 12:00-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Աշտարակի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Նոր Երզնկա գյուղի դպրոցից երեխայի դի է տեղափոխվել «Աշտարակ» բժշկական կենտրոն:

Ըստ նախնական տեղեկությունների՝ երեխան դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճում, վոլեյբոլ խաղալու ժամանակ, իրեն վատ է զգացել, ու մինչ շտապօգնության ժամանումը հանկարծամահ է եղել:

Մահացածը 15-ամյա Դավիթն է:

Դեպքի առթիվ կրկին քրեական վարույթ է նախաձեռնվել: Վարույթի շրջանակներում կատարվել են դեպքի վայրի, դիակի արտաքին զննումներ, որոնց արդյունքում մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել:

Հարցաքննվել են Նոր Երզնկա գյուղի դպրոցի տնօրինության եւ ուսուցչական կազմի ներկայացուցիչները, ինչպես նաեւ մահացած երեխայի համադասարանցիները:

«Ժողովուրդ» օրաթերթը կատարվածի մասին զրուցել է դպրոցի տնօրեն Երազիկ Մեսրոպյանի հետ, ով արդեն իսկ հարցաքննվել է:

Ինչ կպարզի քննությունը՝ ցույց կտա ժամանակը, փաստ է մեկ բան՝ երեխաները դպրոցում առեղծվածային պայմաններում մահանում են:

Ըստ նախնական վարկածի՝ երեխայի մոտ հայտնաբերվել է սրտի հետ կապված խնդիր, ինչից էլ սիրտը կանգ է առել:

Սա, կրկնում ենք, դեռեւս իրավապահների ներկայացրած նախնական վարկածն է:

Նյութերը՝ Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 9-ից 10-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 97 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է ավազակության եւ խարդախության 1-ական դեպք:

Հայտնաբերվել են 6 հետախուզվող եւ 2 անհետ կորած:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 2 դեպք:

Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏԵՂԵԿԱՆՔ ՉԻ ՊԱՀԱՆՋՎԻ

Կառավարությունն իր երեկվա՝ հոկտեմբերի 10-ի նիստում որոշում կայացրեց, ըստ որի՝Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներն իրենց տրանսպորտային միջոցների համար սեփականության իրավունքի գրանցումը կարող են իրականացնել անխոչընդոտ, պարզեցված եւ արտոնյալ ընթացակարգով:

Հիմնավորման մեջ նշվում է, որ տեղահանման արդյունքում Հայաստանում են հայտնվել մասնավոր սեփականություն չհանդիսացող թեթեւ մարդատար ավտոմոբիլներ, որոնք, ունենալով փաստացի օգտագործողներ, դեռեւս չեն հանդիսանում սեփականության իրավունքի օրինական օբյեկտ:

«Այդ պատճառով անհրաժեշտություն է առաջացել պարզեցված ընթացակարգով լուծել նշված տրանսպորտային միջոցների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման խնդիրը՝շեշտադրում կատարելով ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության առաջնահերթության վրա»,- ասված է որոշման հիմնավորման մեջ: Սեփականության իրավունքի պետական գրանցման ժամանակ շահառուներից չի պահանջվի փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման մասին տեղեկանք:

ՎԱՐՈՐԴԸ ՓՈՐՁԵԼ Է ԿԱՇԱՌԵԼ ՊԱՐԵԿՆԵՐԻՆ

Գեղարքունիքի պարեկները հոկտեմբերի 8-ին՝ ժամը 12:50-ի սահմաններում, իրավախախտում կատարելու համար կանգնեցրել են «Յագուար» մակնիշի մեքենան:

«Իրավախախտումը չարձանագրելու համար վարորդը փորձել է որպես կաշառք 20 հազար դրամ տալ պարեկներին: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Մարտունու բաժին, իսկ մեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք:

48-ամյա վարորդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Հակակոռուպցիոն կոմիտե», - ասված է ՆԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 9-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք՝որից 3-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԱՆԵ՛Ք ՄԱՀԱԲԵՐ «ԳԱԶԵԼՆԵՐԸ»

Հոկտեմբերի 9-ին Իջեւան-Դիլիջան-Երեւան երթուղու «Գազելը» Կոտայքի մարզի տարածքում՝ Երեւանից մոտ 20 կմ հեռավորության վրա, կողաշրջվել է, ճանապարհից դուրս ընկել, կա 2 զոհ, 7 վիրավոր: Վիրավորներից 5-ի վիճակը ծանր է, 2-ինը՝կայուն ծանր: Սա վերջին շրջանում երկրորդ դեպքն է, որ այդ երթուղու «Գազելը» ավտոճանապարհին շրջվում է. այն ժամանակ, բարեբախտաբար, զոհ չկար, կային վիրավորներ: Երեւանում, հասարակական տրանսպորտից «Գազելները»

հանել են, մնում է, որ Երեւան-Իջեւան, Երեւան-Դիլիջան եւ այլ երթուղիները սպասարկող «մահացու», բարոյապես ու ֆիզիկապես մաշված «Գազելները» հանվեն միջքաղաքային երթուղիներից: Ցանկացած, նույնիսկ՝ամենաարդիական փոխադրամիջոցը կարող է վթարի ենթարկվել, սակայն «Գազելի» վթարի ենթարկվելու դեպքում դրանում գտնվողների փրկվելու հնարավորությունն ավելի քիչ է: Մանավանդ, որ այդ հին մեքենաների տեխնիկական զննումը կրում է ձեւական բնույթ, որպես հասարակական տրանսպորտ՝ երթուղի են դուրս գալիս տեխնիկական խնդիրներ ունեցող միկրոավտոբուսներ:

ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՆ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ

Սահմանազատման անվան տակ նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները, Կիրանց գյուղի հողերը Ադրբեջանին հանձնվելուց հետո Հայաստան -Վրաստան միջպետական ավտոճանապարհը Ոսկեպար-Բաղանիս հատվածում եւ Կիրանց գյուղի տարածքում ամբողջությամբ հայտնվել է ադրբեջանական զինուժի թիրախում, փաստացի՝ սահմանից շատ քիչ հեռավորությամբ: Տարիներ առաջ նշվում էր, որ Ոսկեպար-Բաղանիս հատվածում ճանապարհի երկայնքով ծառեր են տնկելու, որպեսզի ճանապարհը պաշտպանեն ադրբեջանական հենակետերի տեսադաշտից, սակայն դա չարվեց: Նոյեմբերյանի սահմանագոտու շատ բնակիչներ երեւանյան ընկերություններին պատկանող մեծ բեռնատարներ են վարում, Հայաստանից սննդամթերք, մրգեր, բանջարեղեն տեղափոխում Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններ: Նման ամեն ուղերթի համար տրանսպորտային ընկերությունները վարորդներին 400 հազար դրամ են վճարում: Այս ընկերությունների հետ աշխատող վարորդները ասում են, որ իրենց հրահանգված է բեռները Ռուսաստան տեղափոխել ոչ թե թե Իջեւան-Նոյեմբերյան-Բագրատաշեն, այլ Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն ճանապարհով: Դրա պատճառը ոչ միայն այն է, որ Կիրանցով, Նոյեմբերյանի սահմանագոտիով ձգվող ճանապարհը գտնվում է ադրբեջանական զինուժի թիրախում, այլեւ այն, որ Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհով անցնելիս բեռնված «ֆուռերը» բարձունքներ են հաղթահարում, Վանաձոր-Ալավերդի ճանապարհի համեմատ մոտ 60 հազար դրամի վառելիքի հավելյալ ծախս կատարում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՇԽԱՐՀ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է WITSA-Ի ԳԱՎԱԹԻՆ

Մալայզիան ներկայացնող Pandai Education ընկերությունն արժանացավ Նորարարությունների, տեխնոլոգիաների եւ ծառայությունների համաշխարհային դաշինքի՝ WITSA-ի համաշխարհային գավաթին (WITSA World Cup (WWC)):

Զոհարի կոչվող մարտահրավերի գավաթի (Zohari Challenge Trophy) համար իրենց նորարարական լուծումներով մրցում էին 16 ստարտափներ եւ տեխնոլոգիական ընկերություններ աշխարհի 10 երկրներից, որոնց գործունեության շրջանակն ընդգրկում էր կյանքի բոլոր ոլորտները՝ կրթություն, առողջապահություն, բանկային գործ, առեւտուր, թվային գովազդների օպտիմալացում, այլ:

«WITSA համաշխարհային գավաթը կարեւոր մրցանակ է, որը խթանում է գլոբալ տեխնոլոգիական նորարարությունը: Համախմբելով աշխարհի խոստումնալից ձեռնարկատիրական մտքերը՝ մենք նպաստում ենք աջակցության, գործընկերության եւ ներդրումների էկոհամակարգի զարգացմանը, որոնք կձեւավորեն տեխնոլոգիաների ապագան»,- նշել է Նորարարությունների, տեխնոլոգիաների եւ ծառայությունների համաշխարհային դաշինքի (WITSA), տնօրեն Դր. Դեն Ի Քհուն միջոցառման ավարտին:

WITSA-ի համաշխարհային գավաթի մրցանակաբաշխությունը (WITSA World Cup (WWC)) տեղի ունեցավ WCIT2024/DigiTec-ի շրջանակներում, Երեւանում, հոկտեմբերի 7-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Մրցույթին մասնակցում էին ստատափներ 10 երկրներից (Իսպանիա, Ռումինիա, Հունաստան, Հայաստան, Հորդանան, Մալայզիա, Եգիպտոս, Հունաստան, Միացյալ Թագավորություն, Բահրեյն), որոնցից յուրաքանչյուրում անց էր կացվել մրցույթի տեղական փուլը եւ հաղթողները ներկայացնում էին իրենց երկիրը Հայաստանում անցկացվող համաշխարհային գաղաթի խաղարկման ընթացքում:

WITSA-ի համաշխարհային գավաթում Հայաստանը ներկայացնում էին Երեւանում օգոստոսին հաղթող ճանաչված TextnPayMe եւ AllClean ստարտափները՝ ցուցադրելով նորարարական մոտեցումներն ու ազդեցիկ լուծումների հայկական ներուժը:

WCIT2024/DigiTec-ի շրջանակներում հոկտեմբերին, երեք օր շարունակ ստարտափ ընկերությունները ներկայացրին իրենց գաղափարներն ու գործունեությունը. եզրափակչում մրցեցին Մալայզիայից ժամանած երկու ընկերություններ:

Հաղթող ճանաչված Pandai Education ընկերության հարթակը, օգտագործելով անհատականացված կրթական գործիքներ եւ գնահատման մեթոդաբանություն, խթանում է ուսուցման գործընթացը: Այն գրավել էր ժյուրիի ուշադրությունն իր մասշտաբայնությամբ եւ ազդեցությամբ ինչպես ուսուցիչների, այնպես էլ ուսանողների շրջանում:

«Pandai Education-ի հաղթանակը կարեւոր ձեռքբերում է ոլորտի համար, եւ մենք անչափ հպարտ ենք տեսնելու մրցույթի եզրափակչում մրցող կազմակերպություններին, որոնք ներկայացրին իրենց նորարարությունները: WITSA համաշխարհային գավաթը ստեղծվել է՝ խթանելու եւ տարածելու տեխնոլոգիական առաջընթացը սահմաններից դուրս, եւ Pandai-ի հաղթանակը լավագույնս արտացոլում է այն գլոբալ ազդեցությունը, որը այս մրցույթը կարող է ունենալ: Այս միջոցառումը նշանավորում է նորարարությունը, ձեռնարկատիրությունը եւ համագործակցությունը, որոնք WITSA-ի առաքելության հիմնաքարերից են»,-նշել է Նորարարությունների, տեխնոլոգիաների եւ ծառայությունների համաշխարհային դաշինքի (WITSA), նախագահող Դր. Շան Սիան:

Հոկտեմբերի 4-7-ը Հայաստանում տեղի ունեցավ տարվա ամենասպասված տեխնոլոգիական միջոցառումը՝ Նորարարության եւ տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովը՝ WCIT2024/DigiTec-ը Մարզահամերգային համալիրում, որի շրջանակում անցկացվեց նաեւ Դիջի-Թեք էքսպոն Մերիդիան կենտրոնում: «ՄՏՔԻ ՈՒԺԸ. Արհեստական բանականություն՝սահմաններից այն կողմ՝էթիկայի շրջանակներում» խորագրով WCIT2024/DigiTec համաժողովը տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության ուժեղացման, ներդրումների եւ տարբեր տարածաշրջաններում ու տնտեսություններում (ՏՀՏ) լուծումների կարեւորությունն ընդգծող համաշխարհային հարթակ դարձավ՝ միավորելով մեկ հարկի տակ միջազգային եւ լոկալ մի շարք խոսնակների:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ

Ինչպիսի ցուցանիշներ են արձանագրվել ՀՀ-ում հիվանդությունների բացարձակ եւ հարաբերական ցուցանիշների մասով 2024 թվականին:

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ 2024 թվականին ՀՀ-ում արձանագրված հիվանդությունների բացարձակ եւ հարաբերական ցուցանիշների մասին:

2024 թվականին Հայաստանում գրանցվել է 338 մանրէային աղիքային վարակների դեպք, 130՝ ճշտված այլ աղիքային վարակների դեպք, 582՝ չճշտված եւ ենթադրյալ աղիքային վարակների դեպք, կենդանիների կողմից տուժելու 1074 դեպք, 1245՝ ջրծաղիկով վարակվելու դեպք, ՄԻԱՎ-ի 51 դեպք, ասկարիդոզի 150 դեպք, չճշտված հարուցիչով թոքաբորբի 629 դեպք, հեպատիտ Ց-ի վիրուսի հանդեպ հակամարմինների առկայությամբ 127 դեպք, ոչ բժշկական նշանակության դեպքերի թունավորման 247 դեպք, դեղամիջոցներից, դեղորայքից եւ կենսաբանական նյութերից թունավորման 60 դեպք:

Բժշկական միջամտությունով պայմանավորված վարակներ 2024 թվականի հուլիս ամսին եւս գրանցվել են: Օրինակ՝ հետվիրահատական վարակի 4 դեպք է գրանցվել, միզուղիների վարակի՝ 7, Արյան հունի վարակի (լաբորատոր հաստատված)՝ 9, աղեստամոքսային համակարգի վարակների՝ 15 դեպք:

2024 թվականի հուլիս ամսին սուր շնչառական վարակների 9836 դեպքեր են գրանցվել, մաշկային ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, այդ թվում՝ տրիխոֆիթիա, միկրոսպորիա, ֆավուս, քլամիդիային վարակ, հերպեսային վարակի (հասարակ հերպես) դեպքեր գրանցվել են 89 անգամ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների դեպքեր գրանցվել են 2-ը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 23 պատահար. 3 մարդ զոհվել է, 31-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Idram&IDBank

ԿՑՎԱԾ ՔԱՐՏԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԸ՝ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ

Idram&IDBank հավելվածից օգտվելն արդեն ավելի հարմարավետ է, քան երբեւէ: Այսուհետ հավելվածում տեսանելի կլինեն ԱրՔա համակարգի բոլոր բանկերի կողմից թողարկված եւ օգտատիրոջ կողմից հավելվածին կցված քարտերի օնլայն մնացորդները:

Իդրամից հայտնում են, որ այս բարելավումը նախաձեռնել են բազմաթիվ օգտատերերի առաջարկների հիման վրա, եւ հիմա արդեն անմիջապես Idram&IDBank հավելվածում քարտի մնացորդը տեսնելու եւ իրենց գործարքների վերահսկողության հնարավորություն ունեն ոչ միայն IDBank-ի, այլ նաեւ այն ԱրՔա համակարգի կողմից թողարկված ցանկացած բանկային քարտի առցանց մնացորդը:

«Իդրամից» նաեւ հիշեցնում են, որ Idram&IDBank հավելվածում քարտ կցելը վայրկյանների հարց է, անհրաժեշտ է միայն մուտք գործել «Բանկինգ» բաժին, հաստատել, որ ծանոթացել եք պայմաններին, լրացնել քարտի տվյալները եւ վերջ, քարտը կցված է: Արդեն կարող եք որպես վճարման աղբյուր ընտրել կցված քարտն ու միաժամանակ վերահսկել Ձեր քարտային մնացորդը:

«Իդրամի» տնօրեն Արսեն Քդենյանի խոսքով՝ հաճախորդների կողմից պահանջը կար. «Բոլորիս համար էլ պարզ է՝ որքան հարմար է, երբ մի հավելվածում երեւում են բոլոր քարտերիդ վրա առկա միջոցները, եւ հնարավոր է առանց լրացուցիչ գործողությունների պարզել մնացորդը: Հույս ունենք, որ մեր հաճախորդներն ու օգտատերերը կգնահատեն նոր հնարավորությունը, իսկ բոլոր նրանց համար, ովքեր դեռ չեն հանդիսանում Idram&IDBank հավելվածի օգտատեր, սա հրաշալի առիթ կծառայի», - ասել է Արսեն Քդենյանը՝ հավելելով, որ հավելվածում բարելավվել է նաեւ դեպի ԱրՔա համակարգի քարտեր փոխանցումների բաժինը, մասնավորապես՝ քարտից քարտ փոխանցման հաստատման փուլում էկրանին արդեն արտացոլվում է փոխանցման հասցեատիրոջ Անուն Ազգանուն Հայրանունը, այսինքն՝ փոխանցողը նույն պահին վստահ է լինում, որ ճիշտ հասցեով է ուղարկում գումարը:

Idram&IDBank հավելվածի հնարավորություններն անընդհատ ընդլայնվում են: Իդրամի եւ IDBank-ի ռազմավարական համագործակցության շնորհիվ արդեն մի քանի տարի է, ինչ հնարավոր է կատարել բոլոր ֆինանսաբանկային ու վճարային գործարքները՝ օգտագործելով ընդամենը մեկ հավելված: Թվային ապառիկից մինչեւ անհպում վճարումներ, փոխանցումներ, ժամանցի վայրերի տոմսերի գնում եւ շատ ավելին? այս ամենը վաղուց ընդամենը մի փոքր հատվածն է Idram&IDBank հավելվածի լայն գործիքակազմի, որի վրա շարունակաբար աշխատում են երկու ընկերությունները:

WCIT 2024 Գ

ԵԼՈՒՅԹԸ ՏԵՂԻ ԷՐ ՈՒՆԵՑԵԼ Fastex-Ի ԵՎ Fast Bank-Ի ՀՐԱՎԵՐՈՎ

Ս.թ. հոկտեմբերի 4-ին Երեւանի Հանրապետության հրապարակում տեղի է ունեցել WCIT 2024-ի բացման հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում Fastex-ի եւ Fast Bank-ի հրավերով ելույթ է ունեցել համաշխարհային աստղ Ջեյսոն Դերուլոն: Վերջինս ներկայիս ժամանակաշրջանի ամերիկյան ամենահայտնի փոփ արտիստներից է, ով վաճառել է ավելի քան 250 մլն սինգլ ամբողջ աշխարհում եւ 14 պլատինե սինգլ՝ ԱՄՆ-ում: Ամերիկյան աստղին Հայաստանում ուղեկցել են 30 արտիստներ, որոնց թվում են եղել նաեւ համաշխարհային ճանաչում ունեցող Լեւ Թվինս եղբայրները: Վերջիններս ելույթ են ունեցել Բեյոնսեի Renaissance համաշխարհային շրջագայության ընթացքում:

«Բադալյան եղբայներ» ընկերությունների խմբի գլխավոր գործադիր տնօրեն Վահագն Բադալյանը, անդրադառնալով միջոցառմանը, նշել է. «Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին, որ մեզ են վստահել այս մասշտաբային իրադարձության բացման հանդիսավոր արարողությունը կազմակերպելու կարեւոր գործը: Մենք արել ենք հնարավոր ամեն բան, որ հանդիսատեսը վայելի այս շքեղ համերգը եւ երեկոյից ստանա անմոռանալի տպավորություններ»:

Բացման արարողության ընթացքում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ելույթը ոգեշնչված է եղել մարդկային էության լավագույն դրսեւորումներով: Երաժշտությունն ուղեկցվել է արհեստական բանականության միջոցով գեներացված լուսային տպավորիչ շոուով:

«Երաժշտությունը միավորում է մարդկանց: Իմ գլխավոր առաքելությունն է կյանքի ցանկացած դրվագում երաժշտությանը տալ կարեւոր նշանակություն: Մեծ պատիվ է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ բացել WCIT 2024-ի միջոցառումների շարքը: Մենք ցանկանում ենք երաժշտության միջոցով ընգծել Հայաստանի մասնակցության կարեւորությունը համաշխարհային նմանատիպ իրադարձություններին», - նշել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը:

Հավելենք, որ բացման համերգին ամբողջ հրապարակը երգել է արտիստի ամենահայտնի հիթային կատարումները՝ Swalla, Jalebi Baby եւ շատ սիրված այլ հիթեր: Դերուլոն ներկայացրել է նաեւ իր նոր՝ Make Me Happy երգը, որն այսօր սոցիալական հարթակներում թրենդային է: Համերգն ամփոփվել է շքեղ հրավառությամբ:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով

Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ Գ

ՄԱՄՆԱԳԻՏԱՑՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ Intel-Ի ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ

Freedom Broker Armenia-ն DigiTec Expo 2024-ին ներակայացավ որպես պաշտոնական ներդրումային գործընկեր: DigiTec Expo 2024-ն անցկացվեց «Մերիդիան» էքսպո կենտրոնում՝ համախմբելով ոլորտի առաջատարներին, նորարարներին եւ տեխնոլոգիաների սիրահարներին:

Երեք օրերի ընթացքում Freedom Broker Armenia-ի տաղավարում իսկական աշխուժություն էր: Անցկացվեցին տարատեսակ քուիզներ, քննարկումներ, հարց ու պատասխաններ, ինչպես նաեւ հատուկ միջոցառումներ երեխաների եւ թինեյջերների համար: Տարատեսակ միջոցառումները վարեցին Freedom Broker Armenia-ի տարբեր բաժինների աշխատակիցները, ինչպես նաեւ Freedom Academy-ի թիմը:

DigiTec-ի հետ համագործակցության շրջանակներում Freedom Broker Armenia-ն բոլոր այցելուներին առաջարկում էր նաեւ ներդրումային եզակի հնարավորություն՝ դառնալ աշխարհի խոշորագույն տեխնոլոգիական հսկաներից մեկի՝ Intel-ի համասեփականատերը: DigiTec Expo 2024-ի յուրաքանչյուր այցելու նվեր ստացավ Intel-ի բաժնետոմս: DigiTec-ի այցելուները պետք է բացեին բրոքերային հաշիվ Freedom Broker Armenia-ում եւ մուտքագրեին հատուկ գովազդային կոդ՝ անվճար բաժնետոմսեր ստանալու համար: Արդյունքում միայն մեկ օրվա դրությամբ ավելի քան 250 մարդ դարձավ Intel-ի բաժնետեր, մյուս մասնակիցները եւս կարող են մինչեւ նոյեմբերի 30-ն ակտիվացնել իրենց պրոմոկոդը՝ դառնալով բաժնետեր:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ». ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Յունիբանկ»-ն իր բիզնես հաճախորդներին առաջարկում է էլ ավելի հարմարավետ սպասարկում մասնագիտացված մասնաճյուղերում: Այդպիսի մոտեցումն էապես արագացնում է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի սպասարկման գործընթացը եւ ապահովում անհատական մոտեցում, որը նպաստում է հաճախորդների բավարարվածության մակարդակի բարձրացմանը:

Բիզնես հաճախորդները կարող են այցելել «Յունիբանկ»-ի մասնագիտացված մասնաճյուղեր՝ հետեւյալ հասցեներում.

- Երեւան, Բայրոնի 1, «Բայրոն» մասնաճյուղ
- Երեւան, Կիեւյան 8, N63, «Կենտրոն» մասնաճյուղ
- Երեւան, Կոմիտասի պող. 27, 19 շենք, «Կոմիտաս» մասնաճյուղ
- Երեւան, Խորենացի 33, «Տաշիր Կենտրոն» մասնաճյուղ
- Երեւան, Սեբաստիա 141, «Մալաթիա» մասնաճյուղ

«Յունիբանկ»-ի բիզնես հաճախորդներին հասանելի է ծառայությունների լայն փաթեթ, որը ներառում է հաշիվների արագ բացում, դրամական փոխանցումներ, վարկավորում, լիզինգ, բիզնես քարտի տրամադրում, ավանդներ, բրոքերային ծառայություններ եւ այլն: Որակավորված մասնագետները ձեռնարկատերերին կօգնեն ընտրել առավել հարմար ֆինանսական լուծումներ՝ հաշվի առնելով հաճախորդի բիզնեսի առանձնահատկությունները:

Բիզնես հաճախորդները կարող են նաեւ կառավարել իրենց հաշիվները, կատարել դրամական փոխանցումներ եւ վճարումներ նաեւ UNIBusiness Mobile հավելվածի միջոցով, որը հատուկ մշակվել է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏԸ

ԼԱԼԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՏՔԵՐԸ

Դերասանուհի ով բազմաթիվ դերեր կերտեց թատրոնում եւ կինոյում, սակայն հայ հասարակությունը նրան հավերժ կհիշի «Մեր բակը» հեռուստանախագծի Լալայի կերպարով: Հայտնի եղյակի՝ Լալա, Աշոտ եւ Հրանտ խմբի միակ կինը, հայ հեռուստատեսության եւ կինոյի պատմության վերջին տասնամյակների ամենահետաքրքիր ու խարիզմատիկ կերպարներից մեկն է. կինը որը աղրում է յուրաքանչյուր բակում, որը հավերժ սպասում է «խոպան» գնացած ամուսնուն եւ բակում նստած ուսումնասիրում հարեւանների կյանքն ու առօրյան լցնում ֆնարկումներով:

Չկրկնվող այս հերոսուհուն մարմնավորել է Լալա Մնացականյանը, ով ծնվել է 1957 թվականի հոկտեմբերի 8-ին Երեւանում՝ դերասանուհու եւ մաթեմատիկոսի ընտանիքում: Մայրը՝ Էլիզա Գյուլեսերյանը, եղել է բեմական խոսքի դոցենտ, հայրը՝ Բաբկեն Մնացականյանը՝ մաթեմատիկոս, մաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ: Ընտանիքում եղել է երրորդ աղջիկը:

Գեղանկարիչ, բեմանկարիչ, Հայաստանի վաստակավոր նկարիչ Աշոտ Համբարձումյանի կինն էր:

Լալայի յուրահատուկ կերպարը մարմնավորած դերասանուհին չէր կարող չառանձնանալ իր մտքերով:

Լալա Մնացականյանի մտքերը ներկայացնում են կյանքի, սիրո եւ արվեստի խորքային ընկալումներ, որոնք իր արվեստի հիմքն են: «Ժողովուրդ» օրաթերթը ծաղկաքաղ է արել դերասանուհու մի քանի միտք եւ ներկայացնում է Ձեզ.

1. «Կյանքում ամեն ինչ անցողիկ է, բայց երաժշտությունը միշտ մնում է»:

Այս մտքը անդրադառնում է կյանքի փոփոխականությանը: Լալան ընդգծում է, որ նյութական իրերը ժամանակավոր են, իսկ երաժշտությունը՝ հավերժական: Սա կարող է նշանակել, որ արվեստը ունի ներուժ՝ ստեղծելու մշտական կապ եւ հիշողություններ:

2. «Սիրո մեջ կարեւորը ոչ թե խոսքերն են, այլ զգացմունքները»:

Դերասանուհին կարծում է, որ սերը ավելի շատ գործողություններում է, քան բառերում, ինչը կդառնա հիշողությունների եւ հարաբերությունների հիմք:

3. «Մենք կարող ենք լինել ուժեղ, երբ մեր սիրտը բաց է»:

Սրտի բաց լինելը թույլ է տալիս մարդկանց կապվել միմյանց հետ, ինչը ուժեղացնում է մարդկային հարաբերությունները:

4. «Երաժշտությունը հոգու ձայնն է, որը բացահայտում է ամենալուսավոր եւ խավար կողմերը»:

Միտքը երաժշտության ուժի մասին է, որը կարող է արտահայտել մեր խորքային զգացմունքներն ու էմոցիաները: Երաժշտությունը կարող է լինել ինչպես ուրախության, այնպես էլ ցավի արտահայտիչ:

5. «Ցավը անցնում է, բայց արվեստը միշտ մնում է մեզ հետ»:

Դերասանուհին խոսում է արվեստի ուժի մասին՝ որպես բուժիչ միջոցի, որպես հիշողություն պահող բալասանի: Ցավը կարող է լինել ժամանակավոր, սակայն արվեստը մեզ հետ է մնում՝ թույլ տալով պահպանել հիշողությունները եւ փորձառությունը:

Այս մտքերը համադրում են հոգեբանական եւ ստեղծագործական տարրեր, որոնք կարեւոր են յուրաքանչյուր մարդու համար:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ՝ ՆՌԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Մեղրիում հայ-իրանական նռան փառատոն կանցկացվի: Այս մասին հաղորդագրություն է տարածել Մեղրիի համայնքապետարանը:

Փառատոնը անց է կացվելու հոկտեմբերի 26-ին Մեղրի համայնքի Մեղրիի մարզադաշտում: Փառատոնին ներկա գտնվելու համար մուտքն ազատ է:

«Ցանկացողները կարող են հանդես գալ իրենց տաղավարներով: Հայտերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 18-ը»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե 2023 թվականի ՀՀ-ում քանի՞ ֆիլմ է արտադրվել, քանի՞սն են անավարտ:

2023 թվականին ավարտված 28 ֆիլմ է արտադրվել, այդ թվում՝ 6 խաղարկային լիամետրաժ, 4 խաղարկային կարճամետրաժ, 3 անիմացիոն լիամետրաժ, 1 կինոարտադրություն, իսկ 14-ը՝ այլ արտադրանք եւ ծառայություն:

Ֆիլմերի ընդհանուր արտադրական ծախսերը արտադրության սկզբից կազմել են 956.723 դրամ, որից 635.338 հազար դրամը խաղարկային լիամետրաժ ֆիլմերի համար է տրամադրվել, 45.486 դրամը՝ խաղարկային կարճամետրաժ ֆիլմերի համար, 45.425 դրամը՝ անիմացիոն լիամետրաժ ֆիլմերի համար, 4.496 դրամը՝ կինոարտադրության, իսկ 225.978 դրամը՝ այլ արտադրանքի եւ ծառայության համար:

2023 թվականին անավարտ ֆիլմերի քանակը կազմել է 16-ը, այդ թվում՝ 3-ը խաղարկային լիամետրաժ, 3-ը՝ խաղարկային կարճամետրաժ, 3-ը՝ փաստավավերագրական լիամետրաժ, 1-ը՝ փաստավավերագրական կարճամետրաժ, 4-ը՝ անիմացիոն կարճամետրաժ եւ 1-ը՝ այլ արտադրանք ու ծառայություն:

Անավարտ ֆիլմերի ընդհանուր արտադրական ծախսերը 2023 թվականին արտադրության սկզբից կազմել են 461.003 դրամ, որից 241.661 հազար դրամը՝ խաղարկային լիամետրաժ ֆիլմերի համար է տրամադրված եղել, 24.868 հազար դրամը՝ խաղարկային կարճամետրաժ ֆիլմերի համար, 111.149 դրամը՝ փաստավավերագրական լիամետրաժ ֆիլմերի համար, 1600 դրամը փաստավավերագրական կարճամետրաժ ֆիլմերի համար, 27.500 դրամը՝ անիմացիոն լիամետրաժ ֆիլմերի համար, 34.910 դրամը՝ անիմացիոն կարճամետրաժ ֆիլմերի համար, իսկ 19.315 դրամը՝ այլ արտադրանքի եւ ծառայության համար:

Ֆինանսական միջոցների մուտքեր եղել են ՀՀ բյուջեից, ծառայություններից եւ այլ աղբյուրներից: Ֆինանսական ծախսերն էլ եղել են նյութական, ոչ նյութական, գործուղման, աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ, հիմնավերանորոգման, սարքավորումների եւ գույքի ձեռքբերման ծախսեր:

«ԿՈՄԻՏԱՍ»

Վիեննայի Երաժշտության եւ կատարողական Արվեստի համալսարանի, Երեւանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտի եւ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի համագործակցությամբ՝ Ավստրիայում Հայաստանի դեսպանության պատվո հովանու ներքո անցկացվող «Կոմիտաս» միջազգային գիտաժողովը հոկտեմբերի 8-ին ավարտվեց Հայաստանից ժամանած «Գեղարդ» երգչախմբի համերգով: Այս մասին հայտնում են Ավստրիայում Հայաստանի դեսպանությունից:

«Յոզեֆ Հայդն» լեցուն սրահի բուռն ծափողջյուններով ուղեկցված համերգի ծրագրում հայկական հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտական ժառանգության հայտնի ստեղծագործություններն էին՝ դասական եւ ժամանակակից մշակումներով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՎՔԵՐ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բռնցքամարտի Հայաստանի հավաքականը այս գիշեր մեկնել է Բուլղարիա, որտեղ կմասնակցի մինչեւ 22 տարեկանների Եվրոպայի առաջնությանը:

Այս մասին հայտնում են Հայաստանի Բռնցքամարտի Ֆեդերացիայից:

Մրցումները կմեկնարկեն հոկտեմբերի 12-ին: Եզրափակիչները հոկտեմբերի 20-ին են:

Հայաստանը կներկայացնեն հետեւյալ բռնցքամարտիկները.

48 կգ Հովհաննես Հարությունյան
51 կգ Ռուդոլֆ Գարբոյան
54 կգ Դավիթ Եգորյան
57 կգ Ռուսլան Ասլիկյան
60 կգ Արթուր Սահակյան
63.5 կգ Մանվել Պետրոսյան
67 կգ Հարություն Հակոբկոխյան
71 կգ Նարեկ Ջախարյան
75 կգ Գարիկ Անտանոսյան
80 կգ Համլետ Ադամյան
92 կգ Հենրիկ Ճղրիկյան

Աղջիկներ
48 կգ Լուսինե Գեւորգյան
52 կգ Արեւիկ Դոխոլյան
54 կգ Աննա Ջուռնաչյան
57 կգ Ջուլյա Լալայան
60 կգ Էլիդա Քոչարյան
63 կգ Սոնա Հարությունյան

«ՇԻՐԱԿ»-Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉԸ ՓՈԽՎԵԼ Է

«Շիրակ» ֆուտբոլային ակումբում մարզչական կազմի փոփոխություն է տեղի ունեցել: Այս մասին տեղեկացնում է ակումբի մամուլի ծառայությունը:

Գլխավոր մարզչի պաշտոնում Արսեն Հովհաննիսյանին փոխարինել է Ռաֆայել Նազարյանը:

«Շնորհակալություն ենք հայտնում Արսեն Հովհաննիսյանին անմնացորդ նվիրման ու կատարած աշխատանքի համար:

Արսեն Հովհաննիսյանը կշարունակի մնալ «Շիրակ» ֆուտբոլային ակումբի համակարգում:

Նոր գլխավոր մարզչի նշանակման, նրա մարզչական շտաբի մասին ավելի մանրամասն կներկայացնենք մի փոքր ուշ»,- նշված է հաղորդագրությունում:

ԱՐՏԱԳՆԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի հարձակվող Արթուր Սերոբյանը Ֆարերյան կղզիների դեմ բարդ հանդիպում է ակնկալում: Այս մասին նախախաղային ասուլիսի ժամանակ հայտարարել է ֆուտբոլիստը:

«Ուսումնասիրել ենք մրցակցին: Ծանր հանդիպում եմ ակնկալում, սակայն լավ ենք նախապատրաստվել ու գիտենք, թե ինչպես պետք է խաղանք առաջիկա հանդիպմանը: Պետք է ամեն ինչ անենք՝ դրական արդյունքի հասնելու համար»,- ասաց Սերոբյանը: Ֆուտբոլի Ազգերի լիգայի երրորդ տուրի շրջանակներում Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը հոկտեմբերի 10-ին արտագնա հանդիպում կանկացնի Ֆարերյան կղզիների հետ:

● *Հոկտեմբերի 18-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում կցուցադրվի «Էդիպ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Ալիսա Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 272-րդ հոդված):

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք: Ո՞ւմ է տրվում առաջնահերթություն:

Սիրան Հակոբյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն: Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ազգային հավաքականի եւ գերմանական «Քյոլնի» հարձակվող Սարգիս Ադամյանը գոլի հեղինակ է դարձել «Բոխումի» դեմ կայացած ընկերական խաղում (3:2):

Ադամյանը 7-րդ րոպեին բացել է հանդիպման հաշիվը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +15 + 20
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +14 + 19
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +17 + 20
Գեղարքունիք	+ 4 + 8 +14 + 17
Լոռի	+ 6 + 10 +16 + 19
Տավուշ	+ 8 + 13 +17 + 20
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +18 + 20

Արարատ	+ 13 + 15 +19 + 22
Արմավիր	+ 12 + 14 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +15 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +16 + 18
ԼՂՀ	+ 8 + 10 +15 + 18
Երեւան	+11 + 14 + 15 + 19

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*